
ՊԱՏՄԱԿԱՆ ԴՌՆԵՐ

ՀՈՒՇԱԴՐԱՄՆԵՐԻ ՇԱՐՔ

COLLECTOR COIN SERIES



ՍԵՎԱՆԱՎԱՆՔ

HISTORICAL DOORS

SEVANAVANK



SEVANAVANK

ՍԵՎԱՆԱՎԱՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆ
HISTORICAL

Սևանի վանական համալիրը՝ Սևանավանքը, գտնվում է համանուն թերակղզու բարձունքի վրա: Թերակղզին՝ որպես բնակավայր, հայտնի է դեռևս բրոնզե դարից: Պատմական տեղեկությունների համաձայն՝ Սևանավանքը հիմնադրվել է 305 թ. Գրիգոր Լուսավորչի կողմից, եղել է հայոց գրչության նշանավոր օջախ, որտեղ ընդօրինակվել և գրվել են բազմաթիվ ձեռագիր մատյաններ:

874 թ. Սևանավանքում կառուցված Սուրբ Առաքելոց եկեղեցին (հավաստված է եկեղեցու պատի արձանագրությամբ) մինչ օրս կանգուն է:

Սուրբ Առաքելոց եկեղեցու՝ ընկուզենու փայտից փորագրազարդ դուռը պատրաստվել է 1486 թ.: Այն միափեղկ է (186x98 սմ)՝ բազմաֆիգուր աստվածաշնչյան սյուժետային տեսարաններով, ներքևի հատվածում պատկերված է հավերժություն խորհրդանշող վարդյակ: Դուռը և շրջանակը փորագրված են 13—14-րդ դդ. խաչքարերի ժանեկազարդ ոճով, ինչը վկայությունն է հայ արհեստավարժ վարպետների վառ երևակայության:

Դուռը ներկայացվել է Վատիկանում՝ Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի շրջանակում անցկացված ցուցահանդեսում (2001 թ.), Փարիզում՝ Լուվրի թանգարանի «Սուրբ Հայաստան. հայերի քրիստոնեական հիշողությունը՝ IV—XVIII դարեր» ցուցահանդեսում (2006 թ.), Նյու Յորքում՝ «Մետրոպոլիտեն» արվեստի թանգարանի «Հայաստան. արվեստը, կրոնը և առևտուրը միջնադարում» ցուցահանդեսում (2018—2019 թթ.):

Պատմական դուռը հայկական մշակութային ժառանգության արժեքավոր նմուշ է, գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում՝ հատուկ պետական պահպանության ներքո:

ԴՌՆԵՐ
DOORS

Դիմերես՝ ՀՀ զինանշանը:

Դարձերես՝ Սևանավանքի Սուրբ Առաքելոց եկեղեցու դուռը (1486 թ.):

Հուշադրամը հատվել է «B.H. Mayer Mint» դրամահատարանում, Գերմանիա:



Obverse: the coat of arms of the Republic of Armenia.

Reverse: the door (1486) of the Holy Apostles Church in Sevanavank.

The coin is minted at the B.H. Mayer Mint, Germany.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Անվանական արժեքը
2000 դրամ

Մետաղը/հարգը
արծաթ 999,9⁰

Քաշը
62,2 գ

Տրամագիծը
50,0 մմ

Որակը
պրուֆ

Դրամաշուրթը
ատամնավոր

Թողարկման քանակը
մինչև 999 հատ

Թողարկման տարեթիվը
2026

TECHNICAL SPECIFICATION

Face value
2000 dram

Metal/fineness
silver 999,9⁰

Weight
62,2 g

Diameter
50,0 mm

Quality
proof

Edge
ribbed

Quantity of issue
up to 999 pcs

Year of issue
2026

ՍԵՎԱՆԱՎԱՆՔ

SEVANAVANK

The Sevan Monastery complex, Sevanavank, rises on a hill overlooking the peninsula that shares the name Sevan. This area has been inhabited since the Bronze Age, reflecting its long-standing significance. According to historical sources, Sevanavank was founded in 305 AD by Gregory the Illuminator and later became an important center of Armenian scholarship, where numerous manuscripts were copied and produced.

The Church of the Holy Apostles, constructed in 874 AD (as confirmed by an inscription on its wall), still stands today as a testament to the site's enduring legacy.

The church's intricately carved walnut door, created in 1486, is a remarkable work of art. Measuring 186×98 cm, the single-panel door features richly detailed biblical scenes, while a rosette symbolizing eternity adorns its lower section. Both the door and its frame are executed in a delicate, lace-like carving style reminiscent of 13th–14th-century Armenian khachkars, showcasing the exceptional craftsmanship and artistic imagination of medieval Armenian artisans.

The door has been exhibited internationally, including at Vatican during the events marking the 1700th anniversary of the adoption of Christianity (2001), at the Louvre Museum in Paris as part of the exhibition *"Holy Armenia: The Christian Memory of Armenians: 4th–18th Centuries"* (2006), and at the Metropolitan Museum of Art in New York as part of the exhibition *"Armenia: Art, Religion, and Trade in the Middle Ages"* (2018–2019).

Today, this historic door is preserved as a treasured example of Armenian cultural heritage at the History Museum of Armenia, where it remains under special state protection.





cba.am





ք. Երևան, Դեղատան փողոց, 3